Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը

Սիրելի թիմակից,

Coca-Cola ՀԲՔ-ն հիմնվում է իր հաճախորդների և սպառողների, ինչպես նաև այն համայնքների **վստահության** վրա, որտեղ մենք աշխատում ենք: Մեզ՝ բոլորիս վրա դրված է այդ վստահությունն ամեն օր շահելու պարտավորությունը:

Մեր աշխատավայրում ձևավորած մշակույթի և շուկայում ձեռք բերած մեր հաջողության հիմքում մշտապես եղել են մեր **արժեքները**. Հաղթանակ հաճախորդների հետ միասին, հոգատարություն մեր մարդկանց նկատմամբ, գերազանցություն, ամբողջականություն, ուսում և աշխատանք մեկ մարդու նման:

Աշխատավայրում մենք միմյանց վերաբերվում ենք հարգանքով և գնահատում ենք մեր թիմի յուրաքանչյուր անդամի ներդրումը: Մենք գիտենք, որ կարող են հաջողության հասնել միայն այն դեպքում, եթե ստեղծենք **միասնական, արդար և դրական աշխատանքային միջավայր:**

Շուկայում մենք մրցակցում ենք վճռականորեն, սակայն մենք միշտ **գործում ենք օրենքին համապատասխան՝ պահպանելով էթիկայի կանոնները:** Մենք պատվով ենք վերաբերվում մեր **խոստումներին** և **անում ենք այն, ինչ ճիշտ է, այլ ոչ այն, ինչը պարզապես հեշտ է:** Եվ ամենակարևորը՝ մենք մշտապես պահպանում ենք ամբողջականությունն այն համայնքների հետ, որտեղ ապրում և աշխատում ենք:

Մեր տնօրենների խորհուրդը հաստատել է Գործարար վարքագծի այս կոդեքսը, որն ընդունվել է՝ ստանալով մեր Գործառնական հանձնաժողովի լիարժեք աջակցությունը: Յուրաքանչյուր աշխատակցից ակնկալվում է հետևել այս կոդեքսը որպես իր աշխատանքային պարտականությունների մաս:

Գործարար վարքագծի կոդեքսի այս նոր տարբերակի հրապարակման պատճառը հետևյալն է. արձագանքել որոշ բնագավառներում տեղի ունեցած վերջին զարգացումներին, ինչպիսիք են գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը, ապահովել հստակություն ընդհանուր տրվող հարցերի վերաբերյալ, օրինակ՝ շահերի բախումը, հաղորդակցվել ձեզ հետ մի փաստաթղթի միջոցով, որը կազմված է պարզ և ուղիղ՝ տրամադրելով գործնական ուղղորդում անհատական պատասխանատվությունների վերաբերյալ:

Ես կցանկանայի կիսվել ձեզ հետ մի անձնական գործնական խորհրդով. Մշտապես բարձրաձայնեք: Տարածեք մեր արժեքները: Եթե կասկածներ ունեք Գործարար վարքագծի այս կոդեքսի վերաբերյալ, տվեք հարցեր: Եթե նկատել եք Գործարար վարքագծի կոդեքսի հնարավոր խախտումներ, հայտնեք դրանց մասին: Ըստ ձեր ցանկության դա կարող եք անել անանուն:

Մենք ձգտում ենք լինել ամենամեծ վստահությունն ունեցող և ամենամեծ հարգանքը վայելող ընկերությունն աշխարհում: Ես ձեզնից յուրաքանչյուրին խնդրում եմ միանալ ինձ և անձնապես ստանձնելով մեր արժեքների տարածման հանձնառությունը՝ հետևել սույն վարքագծի կոդեքսին այն ամենում, ինչ մենք անում ենք: Սա ոչ միայն կխթանի Coca-Cola ՀԲՔ-ի հաջողությունը, այլ նաև թույլ կտա մեզ ամեն օր գալով աշխատանքի Կոկա-Կոլ ՀԲՔ՝ կիսվել իրական հպարտության զգացումով:

Հարգանքով,

Զորան Բոգդանովիչ
Գլխավոր գործադիր տնօրեն